տէ անձնապաշտպանութեան սովորել: Արեւելքում կրօնը եւ հոգեւորականութիւնը միշտ դեր են խաղացել ամէն մի հասարակական շարժումների ժամանակ եւ պիտի խաղան:

Հայրիկի դէմքը դարձեալ մռայլոեցաւ:

— Ես իմ պաշտօնակիցներից ա՛յդ չեմ սպասում, — ասաց նա, — որ նրանք քարոզէին ժողովրդին անձնապաշտպանութեան սովորել. ես նրանցից շատ գոհ կը լինէի, եթէ ստրկութեան չսովորեցնէին: Նրանք ամէն հոգսեր կառավարութեան վրայ են դնում: Կառավարութեան գործն է, ասում են, հսկել կարգի եւ ժողովրդի հանգստութեան վրայ: Իսկ երբ ինքը՝ կառավարութիւնը, թոյլ է, անկարգ է, այլեւս ինչպէ՞ս կարող է կարգ պահպանել: Նրանք այդ չեն մտածում եւ միշտ սպասում են, որ մի օր ամէն բան ինքնիրան կլաւանա...

Յետոյ Հայրիկը մեծ ցաւակցութեամբ սկսեց խօսել այն երկպառակութեան վրայ, որի պատճառով ամբողջ տասնեակ տարիներ Վանայ հայ հասարակութիւնը ալեկոծութեան մէջ էր գտնւում, եւ որը այնքան աղէտաւոր չարիքների առիթ եղաւ: Ժողովուրդը երկու կուսակցութեան էր բաժանուած. մէկի պարագլուխն էր տեղային հոգեւոր առաջնորդը մի քանի հարուստ աղաների եւ դաւաճան էֆենդիների հետ, որոնք կառավարութեան պաշտօնների մէջ էին գտնւում, իսկ միւս կուսակցութեան պարագլուխը նորահաս երիտասարդութեան մի խումբ էր, որոնց թոին պատկանում էր եւ Հայրիկը: Մի կողմում ուժ, հարստութիւն եւ իշխանութիւն, միւս կողմում՝ եռանդ, բարի ցանկութիւններ եւ տկարութիւն: Մէկը անկարգ կառավարութեան կողմն էր, իսկ միւսը՝ նեղուած, հարստահարուած ժողովրդի: Մէկը պահանջում էր ուրութիւն եւ անպայման հնազանդութիւն, իսկ միւսը բողոքում էր կատարողող անիրաւութիւնների դէմ: Այդ բոլորը լսելուց յետոյ, ես այն ժամանակ միայն աւելի պարզ հասկացայ, թէ ի՞նչն էր գրգել հոգեւոր առաջնորդին եւ նրա կուսակից էֆենդիներին դաւադրութիւն գործ դնել Հայրիկի կեանքի դէմ: Եւ այդ բոլորը պատմում էր նա հանդարտ եւ հանգիստ կերպով, առանց վրդովելու եւ առանց բարկութեան: Ատելութեան մի նշոյլ անգամ չէր նկատւում նրա խաղաղ դէմքի վրայ: Բայց նրա սառնասրտութիւնը առաջ էր գալիս ոչ թէ անտարբերութիւնից, այլ նրա մեծահոգութիւնից եւ բարձր առաքինութիւնից, որով ներողամտութեամբ էր վերաբերւում դէպի իր թշնամիների չարութիւնները: Բայց, միեւնոյն ժամանակ, չէր կարելի չնկատել նրա խօսքերի ու ձայնի մէջ մի ցաւ, մի դառն եւ խորին ցաւ, որ թաքնուած էր նրա սրտում. թէ ինչո՞ւ այդպէս պէտք է լինէր, թէ այդ անհամաձայնութիւնը, այդ երկպառակութիւնները, այդ ներքին կռիւը որքա՞ն ջլատում էին նրանց ուժե-